միկ դիմեաց գալ առ մեծութիւն ձեր, յորժամ տեսանիցէք զԲարձրագոյն հրովարտակս և զարքունական խիլայն՝ հաւատարմութեամբ գործեսջիք, տալ հրաման դեսպանին, ազգի և ժողովրդոց նորին կալ 'ի խաղաղութեան, բառնալով զպատճառս վնասուց և նեղութեանց, որք կամին ածել 'ի վերայ կալուածոց այգեաց և ուխտաւորաց նոցին, չհակառակիլ ումեք գործոց եւ արարաց նոցին, նեղութեամբ վնասուք և տուգանօք, զորս կատարեն ըստ սովորութեան իւրեանց, և մի հնարել նորանոր իրս, կամ նորոգել զանիրաւութիւնս և զզրկանս, զի յաւուրս յայսոցիկ եղեւ սէր և խաղաղութիւն և դաշնակցութիւն արքունեաց մերոց ընդ թագաւորին Վրաց. զի Իսլամ ժողովուրդք յաշխարհս նոցա են յոյժ 'ի յարգանս և 'ի մեծարանս, և մեք պարտիմք 'ի պատուի ունել զնոսա, և խնամել զվանօրայս զկալուածս զայգիս և զժողովուրդս նոցա, զի խաղաղութեամբ բնակեսցեն 'ի նոսա, և զերեւելի ուխտաւորս որք դան առ նոսա. զի ամենայնն ըստ կարգի և ըստ պատշաճի լիցի բարի, որովհետեւ հպատակ կացին արքունեաց մերոց։ Եւ հրովարտակս այս հաստատեսցէ զնոսա առաջի ամենեցուն 'ի սեփհականութիւնս իւրեանց. բարձրեալն Աստուած պահեսցէ 'ի չնորհս իւր. գրեցաւ 'ի \\ ՃԷմաղիլ Էվվէլ ամսոյ՝ ՁՀԸ (1512)։

Եհան հրովարտակն յԵրուսաղէմ առ մեծ նախարարն, և յանձն առ կատարել զհրաման Սուլթանին, կոչեաց ըզդատաւորս եւ զամենայն երեւելիս, ժողովեցան առ նա 'ի մեծամեծաց մինչեւ ցփոքունս, և դնացին 'ի վանս Ս. Յակոբայ, որ էր յայնժամ արտաքոյ Երուսաղէմի, առ 'ի կատարել զհրաման Սուլթանին. ժողովեցան անդ բազմութիւն 'ի Հայոց և 'ի Վրաց, և ինքն դեսպանն, որ եկեալ էր յԵգիպտոսէ, և սկիզբն արար կուսակալն առաջի բազմութեան ամենայն զգուշութեամբ քննել և 'ի գիր արձանացուցանել։ Եհարց ցմիաբանս Հայոց և ասէ՝ ծանուցէք ինձ վասն վանաց Ս. Յակոբայ, ունի՞ն վիրք բանս ինչ ըզսմանէ, և նոքա ասեն, վանքս այս 'ի սկզբանէ անտի ժառանգութիւն է ազգին Հայոց և ոչ գիտեմք զայլս. և մատուցին զհրովարտակս առաջին թագաւորաց, և զօրինաւոր մուրհակս 'ի դատարանէ, որոց թուականքն անցա-